Հաստատում եմ՝ Digitally signed by GALSTYAN KNARIK
Դպրոցի տնօրեն՝ /Ք.Գալստյան/

«Հմուտ ձեռքեր» խմբակի ծրագիր

ՀՀ Արմավիրի մարզ
<<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
2023-2024 ուսումնական տարվա
աշխատանքների իրականացմա ծրագիր
Vբ դասարան

Շաբաթական 2 ժամ X 34շաբ =68դ/ժ

Խմբավար՝ Ա.Ավետիսյան

«Հմուտ ձեռքեր» խմբակի ծրագիր

Հիմնական դպրոց

Ժամաքանակ՝

Շաբաթական՝ 2ժամ

Տարեկան ՝ 68 ժամ

«Հմուտ ձեռքեր» խմբակի նպատակը, խնդիրները և հիմնական սկզբունքները

Տեխնոլոգիա հանրակրթական առարկայի հիմնական նպատակն է սովորողներին նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին. դաստիարակել կիրթ,ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի: Առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթների պահպանման և զարգացման գործը: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որը ուղված է մարդու գործնեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործնեության օպտիմալացման, արդյունքների զարգացման: Տեխնոլոգիան ըստ էության գործնական ուղղորդող և ուսուցանող ոլորտ է: Նա նաև ոլորտ է որտեղ ինտեգրվում են մյուս հանրակրթական առարկաներից ստացած գիտելիքները, գործնականում կիրառելով դրանք: Կենսապես անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորումը, աշխատանքային կուլտուրան, թիմով աշխատելու ունակությունը, ինքնաճանաչման և ինքնահաստատման լավագույն ուղին է, որը փորձի ավելացմամբ միմիայն լավագույն որակների երաշխիք է հանդիսանում: Այս ամենը հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված հիմնական ձևակերպումներն են տեխնոլոգիա առարկայի նպատակների և խնդիրների շուրջ:

Տեխնոլոգիան իր բնույթով անընդհատ ստեղծագործելու, պրպտելու և կատրելագործվելու հնարավորություն ստեղծող բնագավառ է: Սովորողները առնչվելով «տեխնոլոգիա» առարկային, ակամայից իրենք էլ դառնում են այդ մեծ համակարգի մասնիկ՝ հեշտությամբ և սիրով ներգրավվելով գործընթացին:

Ձեռքի աշխատանքներ կատարելիս զարգանում են երեխայի էսթետիկ ճաշակը, գույները գեղեցիկ համադրելու հմտությունը, ձեռքերի ճկունությունը, տալիս է հնարավորություն, որպեսզի երեխաները կատարեն առաջադրանքաները նորովի և դրսևորեն անհատական ստեղծագործական մոտեցում:

Հայ կնոջ համար ձեռքի աշխատանքը / ասեղնագործություն, հեյլունագործություն, շյուղագործություն, գորրգագործություն, կարպետագործություն, խոհարարություն և այլն/ գեղեցիկի չափանիշ է, սեփական հմտության ու վարպետության արտահայտությունը: Այս ամենը սկսվում է դպրոցից ՝ հատկապես «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում: Բայց առարկայի դասընթացի կազմակերպման ընթացքում վեր նշված ուղղությունները, ժամային առումով, հնարավոր չի իրագործել խորացված ուսուցմամբ: Դրա համար արտադասարանական ՝ «Հմուտ ձեռքեր », խմբակի համակարգված աշխատանքը կնպաստի սովորողի մեջ առարկայական, մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և ինքնուրույն աշխատանքների ընթացքում:

Հիմք ընդունելով պետական և դպրոցական տոնացույցը՝ «Հմուտ ձեռքեր» խմբակը հիմնականում հանդես է գալիս որպես ձևավորման նախագծեր իրականացնող, ցուցահանդես-վաճառք կազմակերպող և սպասարկող օղակ: Աշխատելով միևնույն նախագծերի շուրջ՝ ծեսին ծանոթ կրտսեր դպրոցն ավարտած միջին դպրոցի սովորողը ոչ թե ձանձրանում է միօրինակությունից, այլ որպես պաշար ընդունելով իմացածը, զարգացնում և նոր ձևերի է բերում: Սովորողները հնարավորություն են ունենում ազատ ստեղծագործելու, որտեղ շատ հստակ երևում է յուրաքանչյուրի հետաքրքրությունները, ճաշակը, մտքի և ձեռքի համապատասխանությունը:

Այսպիսով, « Հմուտ ձեռքեր » խմբակի դասընթացի նպատակն է ՝

- ծանոթացնել ձեռքի աշխատանքների տարբեր ճյուղերին
- ներկայացնել տարբեր ճյուղերի սկզբնավորման պատմությանը և արժևորել դրանց պատմամշակութային, սոցիալական, ազգային դերը
- բացահայտել այլ ազգերի նմանատիպ աշխատանքները, ունեցած առնչությունները, թողած ազդեցությունները հայ ժողովրդի հոգևոր կյանքում ունեցած դերն ու նշանակությունը
- տիրապետել հայկական ժողովրդական արհեստների կատարման տեխնիկաներին, դրանք կիրառել գեղարվեստական աշխատանքներում:

- բացահայտել ազգային լավագույն ավանդույթները, ծեսերը, պահպանել ձեռքի աշխատանքների օգտագործումը տոնակատարությունների ընթացքում
- նպաստել ստացած գիտելիքները գործնականում կիրառել
- ձևավորել կենսապես անհրաժեշտ հմտություններ և կարողություններ, աշխատանքային կուլտուրա, թիմով աշխատելու ունակություն
- զարգացնել սովորողի գեղագիտական ճաշակը

« Հմուտ ձեռքեր » խմբակի դասընթացի խնդիրներն է՝

- Ապահովվել աշխատասենյակով ե աշխատասեղանով ,
- Հետեել անվտանգության կանոններին
- Աշխատրանաք տանել, որ խմբակի անդամները ունենան աշխատանքները կատարելու համար համապատասխան նյութատեխնիկական բազա
- Հաճախակի կազմակերպել միջոցառումներ, ցուցահանդեսներ

« Հմուտ ձեռքեր » խմբակի դասընթացի վերջնարդյունքները՝

- Ճանաչի ձեռքի աշխատանքների տարբեր ճյուղերին
- Ներկայացնի տարբեր ճյուղերի սկզբնավորման պատմությանը և արժևորի դրանց պատմամշակութային, սոցիալական, ազգային դերը
- բացահայտի այլ ազգերի նմանատիպ աշխատանքները, ունեցած առնչությունները, թողած ազդեցությունները հայ ժողովրդի հոգևոր կյանքում ունեցած դերն ու նշանակությունը
- բացահայտի ազգային լավագույն ավանդույթները, ծեսերը, պահպանի ձեռքի աշխատանքների օգտագործումը տոնակատարությունների ընթացքում
- կարողանա ստացած գիտելիքները գործնականում կիրառել
- ձևավորի կենսապես անհրաժեշտ հմտություններ և կարողություններ, աշխատանքային կուլտուրա, թիմով աշխատելու ունակություն
- զարգացնի գեղագիտական ճաշակը

Առարկայի դասընթացը նախատեսված է իրականացնել 5-ից 7-րդ դասարաններում սովորող աշակերտների հետ:

Ծրագրի բովանդակային մաս

1.Դեկորատիվ-կիրառական արվեստ՝ Դեկորատիվ արվեստը միջավայրի, տոնակատարությունների, հանդիսությունների, ցուցադրությունների և այլ միջոցառումների գեղարվեստական ձևավորման, ինչպես նաև գեղարվեստական կենցաղային իրերի պատրաստման արվեստն է: Դեկորատիվ-կիրառական արվեստը դեկորատիվ արվեստի և ժողովրդական ստեղծագործության նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծող ոլորտ է: Դեկորատիվ արվեստն սկզբնավորման շրջանը, դեկորատիվ արվեստի ճյուղերը:

Օրիգամի դեկորատիվ-կիրառկան արվեստի տեսակ, թղթից առարկաներ պատրաստելու հնագույն արվեստ՝ Եվրոպայում, Չինաստանում և Ճապոնիայում :

2.Աշխատանք բնական և արհեստական նյութերով՝ Բնական նյութեր՝ տերևներ, սերմեր, ճյուղեր, արմատներ, կոներ և այլն:Արհեստական նյութեր՝ կենցաղում այլևս չօգտագործվող նյութեր, փրփրապլաստ և այլն:

3. Ասեղնագործություն՝ Տեղեկություններ ասեղնագործության մասին: Պատմական ակնարկ հայկական Այնթափի՝ թելքաշ, Մարաշի, Վասպուրականի՝ ժանյակ, ասեղնագործության մասին: Ընդհանուր տեղեկություն ասեղնագործության և ձեռքի կարատեսակների մասին:Ասեղնագործության կիրառումը ազգային և ժամանակակից հագուստի ձևավորման մեջ:

4. Ձեռարվեստ (հելունագործություն, շյուղագործություն)՝ Ձեռարվեստը մարդու ձեռքի աշխատանքի ու արվեստի միաձուլված աշխատանքի արգասիքն է :

«Հմուտ ձեռքեր» խմբակի տարեկան թեմատիկ պլանավորում

Տարեկան ժամաքանակ՝ 68 ժամ

Շաբաթական ժամաքանակ՝ 2 ժամ

	Թեման	Նպատակը	Վերջնարդյունքները
1.	Դեկորատիվ-կիրառական արվեստ 18 ժամ	• ծանոթանալ դեկորատիվ-կիրառական արվեստի ծագման, ձևավորման և	• Ճանաչի դեկորատիվ-կիրառական արվեստի ծագման,

		զարգացման օրինաչափություն ներին • Տարբերակել դեկորատիվ-կիրառական արվեստի սկզբնավորման շրջանը, դեկորատիվ արվեստի ճյուղերը • Բացահայտել Օրիգամին դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ	ձևավորման և զարգացման օրինաչափություն ներին • Տարբերակի դեկորատիվ-կիրառական արվեստի սկզբնավորման շրջանը, դեկորատիվ արվեստի ճյուղերը • Բացահայտի Օրիգամին դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ
1.	Դեկորատիվ-կիրառական արվեստի ուսուցման հարցերը կրթության պատմության մեջ		
2.	Դեկորատիվ-կիրառական արվեստի ձևերն ու տեսակները		
3.	Դեկորատիվ-կիրառական արվեստը որպես նյութական ե հոգեոր արժեքներ ստեղծող ոլորտ:		
4.	Սովորողների ստեղծագործական ակտիվության խթանումը դեկորատիվ աշխատանքներիմիջոցով		
5.	Դեկորատիվ-կիրառական արվեստների գեղագիտական և կիրառական առանձնահատկությունները		
6.	Գույն և գունատեսություն: Գունային ներդաշնակության կառուցման սկզբունքները ժող. գեղ. արհեստագործության ընթացքում /կարպետ, գոբելեն. հագուստի մոդելավորում/		
7.	Գունային կոլորիտի խնդիրները գործվածքների գեղարվեստական ձևավորման և հագուստի մոդելավորման ընթացքում /ազգային տարազ, ժամանակակից		

	հագուստ /		
8.	Տարազ. ազգային առանձնահատկությունները, ձևավորման սկզբունքները.		
9.	Տարազի խորհուրդն ու արտահայտչականությունը		
10.	Զարդանախշը որպես հասարակության նյութական մշակույթի մաս		
11.	Զարդամոտիվների ընտրությունը ըստ երկրաչափական, բուսական և կենդանական ձևերի		
12.	Ապլիկացիա /կոլլաժ/, նրա առանձնահատկությունները, կիրառման շրջանակները		
13.	Օրիգամի դեկորակիվ-կիրառակա արվեստի տեսակ, թղթից առարկաներ պատրաստելու հնագույն արվեստ՝ Եվրոպայում, Չինաստանում և Ճապոնիայում		
14.	Օրիգամի դեկորակիվ-կիրառակա արվեստի տեսակ, թղթից առարկաներ պատրաստելու հնագույն արվեստ՝ Եվրոպայում, Չինաստանում և Ճապոնիայում		
15.	Գեղարվեստական տառատեսակներ, օգտագործումը դեկորատիվ աշխատանքներում: Հայկական տառատեսակի առանձնահատկությունները		
16.	Միջավայրի, հանդիսությունների ,ցուցահանդեսների ,միջոցառումների ձևավորման սկզբունքները		
17.	Միջոցառումների ձևավորումը՝ դեկորատիվ-կիրառական արվեստի սկզբունքներից ելնելով		
18.	Կազմակերպել խմբակի անդամների կողմից պատրաստված իրերի ցուցադրություն		
	Թեման	Նպատակը	Վերջնարդյունքները
	Աշխատանք բնական և արհեստական նյութերով (16ժամ)	Ձևավորել և ընդլայնել գիտելիքներ բնական և արհեստական նյութերի մասին Ներկայացնել բնական և արհեստական նյութերը որպես ոգեշնչման	Տարբերակի բնական և արհեստական նյութերը և իմանա, թե ինչպես կարելի է դրանք գործածել Հասկանա, որ տարբեր նյութեր և ռեսուրսներ

		անսպառ աղբյուր Զարգացնել որոշ նյութերի և մեխանիզմների մասին, հմտություններ՝ կազմելու իրի պատրաստման տեխնոլոգիական երթուղի	կարող են մշակվել՝ տարբեր կարիքների բավարարման համար Ստեղծի գեղարվեստական իրեր բնական և արհեստական նյութերով
19.	Ծանոթանալ բնական և արհեստական նյութերի հետ		
20.	Բնական և արհեստական նյութերի օգտագործման առանձնահատկությունները		
21	Բնական և արհեստական նյութերով աշխատելու տեխնալոգիան		
22	Խաղալիքների պատրաստում բնական և արհեստական նյութերով		
23	Խաղալիքների պատրաստում բնական և արհեստական նյութերով		
24	Աշխատանք եղևնու կոներով(զամբյուղներ, ծաղկամաներ և այլն)		
25	Աշխատանք եղևնու կոներով(զամբյուղներ, ծաղկամաներ և այլն)		
26	Բնական փայտի տաշեղներով մոմակալների պատրաստում		
27	Բնական փայտի տաշեղներով մոմակալների պատրաստում		
28	Արհեստական նյութերով՝ փրփրապլաստներով, կնդանիների, թռչունների,երկրաչափական պատկերների պատրաստում		
29	Փայտի թեփով, ավազով, բնական և արհեստական մանրաթելերով մոզաիկաների ստեղծում		
30	Փայտի թեփով, ավազով, բնական և արհեստական մանրաթելերով մոզաիկաների ստեղծում		
31	Բնական սերմերի օգտագործումը կոմպոզիցիաների մեջ		
32	Ծիսական խաղալիքների պատրաստում բնական և արհեստական նյութերով		
33	Ծիսական խաղալիքների պատրաստում բնական և արհեստական նյութերով		
34	Կազմակերպել խմբակի անդամների կողմից պատրաստված իրերի		

	ցուցադրություն		
	Թեման	Նպատակը	Վերջնարդյունքները
	Զեռարվեստ (ասեղնագործություն, շյուղագործություն, և հելունագործություն)	Հաղորդել տեղեկություններ ասեղնագործության մասին։ ·Սովորեցնել ստեղծել պարզ նախշեր։ • Ծանոթացնել հին հայկական ասեղնագործությունը և զարգացման ճյուղերը • Բացահայտել հայկական և այլ ազգերի ասեղնագործ աշխատանքների նմանություններն ու տարբերությունները ·Ծանոթացնել հելունագործության գործընթացին։ ·Կատարել թելերի և գործիքների ընտրություն։ ·Ծանոթացնել շյուղագործության գործընթացին։ · Կատարել թելերի և	·Սովորողները կիմանան գործվածքի վրա էսքիզի փոխանցման ձևերը։ ·Կկատարեն ավանդական և ժամանակակից զարդանախշերի էսքիզներ։ • Ծանոթանա հին հայկական ասեղնագործությունը և զարգացման ճյուղերը • Գնահատի հայկական և այլ ազգերի ասեղնագործ աշխատանքների նմանություններն ու տարբերությունները ·Տարբեր նյութերով կկատարեն ապլիկացիոն աշխատանքներ։ ·Կկարողանան գեղարվեստական աշխատանքներ կատարել՝ օգտվելով նորաձևության ամսագրերից։ ·Կնպաստի առանցքային

		գործիքների ընտրություն։	կոմպետեցիաների զարգացմանը, որը կբերի մասնագիտական կողմնորոշում։ • Ճիշտ և անվտանգ օգտագործել շյուղագործության համար անհրաժեշտ գործիքներն ու հարմարանքները։ • Կարողանան գործել հագուստներ և անհրաժեշտ այլ իրեր։
35	Ասեղնագործության ծագումն ու տարածումը		
36	Հին հայկական ասեղնագործությունը և զարգացման ճյուղերը		
37	Ասեղնակարերի տեսակները(դարձկար,շարակար,խաչկար,օղակակար,պատկար)		
38	Ասեղնակարերի տեսակները(շղթայակար,ցողունակար,վրադիր կար)		
39	Ասեղնակարերի տեսակները(հանգուցային կար,պարանակար,հարթակար)		
40	Հարթակարերի տեսակները ըստ տարածաշրջանների (լիցք,ուռուցիկ, համրովի ,գծային)		
41	Վան-Վասպուրականի ասեղնագործությունը(ժանյակներ)		
42	Շիրակ-Կարինի ասեղնագործությունը		
43	Սյունիքի ասեղնագործությունը		
44	Արարատյան ասեղնագործություն		
45	Մարաշի ասեղնագործություն (ժանյակներ, կենաց ծառ)		
46	Ուրֆայի ասեղնագործություն		
47	Թբիլիսիի հայկական ասեղնագործությունը		
48	ՏՀՏ գործիքների միջոցով ստեղծել զարդանախշերի քարտեզներ,ընտրել նախշեր		

	հայկական մանրանկարչությունից
49	Նախագծային աշխատանքներ՝ներկայացնել ասեղնագործ խոհանոցային պարագաներ(Ասեղնագործել հայկական ավանդական զարդանախշերով սփռոցներ, սրբիչներ, անձեռոցիկներ)
50	Խմբակի անդամների ասեղնագործ աշխատանքների ցուցադրություն
51	Ծանոթացնել հելունագործության գործընթացին։ Կատարել թելերի և գործիքների ընտրություն։
52	Գործել խոհանոցային բռնիչներ, խոհանոցային տակդիրներ
53	Գործել մանկական գլխարկներ
53	Գործել մանկական գուլպաներ
53	Գործել մանկական տիկնիկներ
54	Գործել մազակալներ
55	Ծանոթացնել շյուղագործության գործընթացին։ Կատարել թելերի և գործիքների ընտրություն։
56	Նախնական հատերի հավաքման եղանակները։Շիտակ և թարս, եզրային, հավելյալ,հանած, ընդգրկող հատերի հյուսման եղանակները։
57	Հատերի տեղափոխման եղանակները և առանձնահատկությունները
58	Մեկ հատից մի քանի հատերի հյուսման եղանակները
59	Վերջին շարքի հատերի փակման եղանակները
60	Շյուղերով նախշերի հյուսում
61	Ծակոտկեն նախշերի եղանակները
62	Հատերի ավելացման և պակասեցման առանձնահատկությունները
63	Գործել մանկական գուլպաներ
64	Գործել մանկական գլխարկներ
65	Գործել մանկական այլ իրեր՝ մազակալներ, շարֆեր

66	Նախապատրաստվել ցուցահանդեսին
67	Կազմակերպել աշխատանքների ցուցահանդես-մրցույթ(գնահատում) դպրոցի էջում
68	Կազմակերպել ցուցահանդես `«Տարվա լավագույն աշխատանք» թեմատիկայով